«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների ինքնուրույն գործունեության ձևերը տվյալ առարկայի դասավանդման գործընթացում
ԱՌԱՐԿԱ	Տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ	Գոհար Աղեկյան
ՄԱՐԶ	Լոռու մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Կաթնառատի միջնակարգ դպրոց
ՂԵԿԱՎԱՐ՝	ՄԳԴ Ա. Ծատուրյան

Ստեփանավան 2022

Բովանդակություն

Ներածություն.....3

1.Կրտսեր դպրցականների ինքնուրույնության և ինքնուրույն գործունեության ձևերը 4

2. Տեխնոլոգիայի դասերին կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքների առաջադրանքների մշակում.....13

Եզրակացություններ.....18

Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կրտսեր դպրոցականների ինքնուրույն գործունեության զարգացման խնդիրը կազմում է ուսուցման գործընթացի հիմքը, որը ժամանակի ընթացքում չի կորցնում իր արդիականությունը՝ առաջ բերելով մշտական ուշադրության պահանջ և հետագա զարգացման անհրաժեշտություն:

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրության նպատակն է տեսական գրականության վերլուծությամբ բացահայտել կրտսեր դպրոցականների ինքնուրույն գործունեության ձևերը:

Ուսումնասիրության խնդիրները:

1. Բացահայտել կրտսեր դպրոցականների ինքնուրույն գործունեության ձևերը,
2. Մշակել առաջադրանքներ տեխնոլոգիա դասընթացի ընթացքում կրտսեր դպրոցականների ինքնուրույն գործունեության կազմակերպման համար:

Աշխատանքի օբյեկտը: Ուսումնասիրության համար օբյեկտ է հանդիսանում կրտսեր դպրոցականների ինքնուրույն գործունեության ձևերը :

Աշխատանքի առարկան: Ուսումնասիրության առարկան է տարրական դպրոցում ինքնուրույն գործունեության ձևերը կազմակերպման մեթոդիկայի առանձնահատկությունները:

1. Կրտսեր դպրցականների ինքնուրույնության և ինքնուրույն գործունեության ձևերը

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Տարրական դասարանում ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

ՈՒսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել,բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց:

Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:

Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել

այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:

Ինքնուրույն աշխատանքների կազմակերպումը նպաստավոր պայմաններ է ստեղծում կրտսեր դպրոցականների ստեղծագործական ակտիվության զրգացման համար:

Ինքնուրույն աշխատանքներ կազմակերպելիս հաշվի են առնվում գործունեության այնպիսի տեսակներ, որոնք խթանում են անձի աշխարհայեցողությունը և ապահովում նրա ստեղծագործական ինքնուրույնությունը: Սա, իր հերթին, այնպիսի գործընթացների կազմակերպման պահանջներ է ներկայացնում, որոնք պետք է օժանդակեն սովորողների ինքնուրույնության աստիճանի բարձրացմանը, նախաձեռնողականության ակտիվացմանը և ստեղծագործական ներուժի զարգացմանը, նրանց ստեղծագործական ակտիվությանը:

Հարկ է նկատել, որ ստեղծագործական ակտիվության խնդրին բավականին աշխատանքներ են նվիրված հոգեբանությունից ու մանկավարժությունից: Նշված հեղինակների գործերում այդ հասկացությունների սահմանման գոյություն ունեցող տարբերությունները, մի կողմից, օգնում են գտնել խնդրի լուծման ուղիները, մյուս կողմից՝ նպաստում են նորերի ձևակերպմանը: Հայտնի է, որ գոյություն ունեն ստեղծագործական գործունեության ուսումնասիրման մի քանի մոտեցումներ, որոնք նախ և առաջ հարաբերակցության մեջ են գիտելիքների համապատասխան ոլորտների հետ, որտեղ այդ ստեղծագործությունը դրսևորվում է:

Մասնավորապես փիլիսոփայական բառարանում «ստեղծագործություն» հասկացությունը բնորոշվում է հետևյալ սահմանմամբ. ստեղծագործությունը մարդկային գործունեության արդյունք է, որում ստեղծվում են որակապես նոր նյութական ու հոգևոր արժեքներ՝ հիմնված օբյեկտիվ աշխարհի օրինաչափությունների ճանաչման վրա, ստեղծելով նոր իրականություն, որը կբավարարի հասարակական ամենաբազմազան

պահանջմունքները[1]): Փիլիսոփայական ընկալումներով ստեղծվածը հատուկ է կենդանի ու մեռած բնությանը, մարդուն և հասարակությանը:

Յա. Սկալկովան, կարծում է, որ ստեղծագործությունը անձի ինտեգրալ որակ է, այն համարժեք չէ մտավոր ընդունակություններին: Ավելին' նա հաստատում է, որ «...մեծ մտավոր ընդունակությունները ոչ միշտ են համապատասխանում ստեղծագործության բարձր մակարդակին»[2]: Ստեղծագործելու համար, նրա կարծիքով, անհրաժեշտ են բարձր աշխարհայեցողություն, նոր գիտելիքների և դրանց հիման վրա արդեն գոյություն ունեցող իրականության կատարելագործման ուղղությամբ կերպափոխող գործունեության ներքին պահանջ, հակասությունների, խնդրի գիտակցումից բխող նպատակների գիտակցական ձեակերպում, այդ նպատակներին հասնելու ուղիների որոնում, համառություն, աշխատունակություն, թույլ տրված վրիպումներից հրաժարվելու կարողություն, ընդհանուր ուղղվածություն, ծագող դժվարությունները հաղթահարելու ժամանակ ինքնուրույն ակտիվության ներքին տրամադրվածություն և այլն:

Դպրոցականների ստեղծագործական ակտիվության բացահայտման համար սկզբունքային է Լ. Ս. Վիգոտսկու միտքն այն մասին, որ «ստեղծագործությունը գոյություն ունի ոչ միայն այնտեղ, որտեղ այն մեծ պատմական դերակատարում է ունենում, այլե այնտեղ, որտեղ մարդը երեակայում է, համադրում է, փոփոխում ու ինչ–որ նոր բան է ստեղծում: Երևակայելու նկատմամբ երեխաների ձգտումը ստեղծագործական այնպիսի գործունեություն է, ինչպիսին խաղը: Անհրաժեշտ է զարգացնել երեխայի երևակայությունը, եթե ուզում ենք նրա ստեղծագործական գործունեության համար կայուն հիմքեր ստեղծել: Որքան շատ է երեխան տեսնում, լսում, հուզվում, որքան շատ է նա ընկալել ու բացահայտել, որքան ճիշտ է վերարտադրել իր զգացածը, այնքան բարձր է նրա ստեղծագործական ակտիվությունը, այնքան նշանակալի ու արդյունավետ կլինի նրա երևակայության բացահայտումը: Երեակայությունը կարևոր գործառույթ է ձեռք բերում

---

[1] *Философский словарь* / под ред. Н. Т. Фролова, 4–е изд., М., “Политиздат”, 1980, էջ 363-364, **Ն. Գրիգորյան,** Դպրոցականների ստեղծագործական ակտիվության զարգացման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում, Մանկավարժական միտք, 1-2, 2011թ, էջ 53-57

[2]Скалкова Я., От теории и практики обучения в средней общеобразавательной школе, М., “Педагогика”, 1983 , էջ 5

մարդու վարքագծի ու զարգացման մեջ, որովհետև նա կարող է երեակայել այն, ինչը չի տեսել, կարող է ուրիշի պատմածով ու նկարագրածով պատկերացնել այն, ինչը նրա անձնական փորձառության մեջ չի եղել, նույնիսկ կարող է այդ փորձից շատ հեռանալ, որտեղից էլ առաջանում է երևակայության ու ստեղծագործական ակտիվության երկակի ու փոխադարձ կախվածությունը»[3]:

Սրանից հետևում է, որ ստեղծագործական գործունեությունը բնութագրվում է անձի ստեղծագործական երևակայության առկայությամբ, որը, Վ. Ա. Կրուտեցկու կարծիքով, «անցած փորձի տպավորությունների վերափոխման, վերամշակման, այդ տպավորությունների' նոր համակցությունների ու համադրությունների մեջ միավորված նոր կերպարների ստեղծում է»[4]:

Այսպիսով, չնայած «ստեղծագործություն» հասկացության էության մեկնաբանության որոշակի տարբերություններին' որոշակի ընդհանրություն է նկատվում հե- տազոտողների անձի զարգացմանն օժանդակող նորի ստեղծման գործընթացի ցուցանիշներին վերաբերող հայացքներում:

Մանկավարժական ու հոգեբանական գրականության մեջ բավականին հաճախ է խոսվում ստեղծագործական ընդունակությունների զարգացման խնդրի մասին: Հարկ է նկատել, որ ընդունակությունները վերաբերում են անհատի առավել էական հոգեկան հատկություններին: Ընդունակությունների խնդիրն ուսումնասիրող հոգեբանների մեծ մասը տվյալ գործունեության մեջ սահմանում են ընդունակությունների ու կարողությունների որոշակի հարաբերակցություն: Այսպես' Վ. Ա. Կրուտեցկին ենթադրում է, որ «ընդունակություն» հասկացությունը բխում է այն մարդու կարողությունից, որը կատարում է տվյալ գործունեությունը[5]:

Ինչպես տեսնում ենք, հետազոտողը խոսում է ստեղծագործական ակտիվության մասին, որի զարգացման պայմանը խնդիրը դնելն ու այն լուծելն է:

---

[3] Выготский Л. С., Воображение и творчество в детском возрасте, СПб., “Союз”, 1997, էջ 52

[4] Крутецкий В. А., Психология обучения и воспитания школьников: кн.для учителей и классных руководителей, М., “Просвещение”, 1976.էջ 67

[5] Крутецкий В. А., Психология обучения и воспитания школьников: кн.для учителей и классных руководителей, М., “Просвещение”, 1976.էջ 67

Վերը բերված տեսակետների համադրման հիման վրա կարելի է հավաստել, որ արդի հետազոտություններում ստեղծագործությունը, ստեղծագործական ընդունակությունները դիտարկվում են որպես բազմաչափ երևույթ, որն ընդգրկում է ինչպես մտավոր, այնպես էլ անհատական սոցիալական գործոններ: Այս շրջանակում դիտարկվում են ստեղծագործական գործունեության կազմակերպման սոցիալական պայմանները: Կրթական հաստատությունում ստեղծված այդպիսի պայմանները թույլ են տալիս՝

- երեխաներին ինքնորոշվել գործունեության ամենաբազմազան ոլորտներում՝ կրելով տարբեր փոխազդեցություններ,
- ստեղծել մանկավարժական պայմաններ մշակութային համատեքստում՝ երեխաների սոցիալականացման համար,
- ծնողներին (որպես պատվիրատու) մասնակցել կրթական ծառայությունների միջավայրի ստեղծմանը:

Ուսումնադաստիարակչական գործընթացում հիշյալ պայմանները պետք է փոխակերպվեն մանկավարժահոգեբանականի: Հետևաբար, մենք կարող ենք խոսել այդ պայմանների մասին՝ որպես սոցիալ-մշակութային համատեքստում գործունեության տեսակների բազմազանություն և փոխազդեցության կազմակերպում:

Ինքնուրույն աշխատանքի դասակարգման հատկանիշներ՝

I ըստ ուսումնական նպատակների

1. Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող
2. Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող
3. Գիտելիքները համակարգող
4. Որոշակի կարողություններ զարգացնող
5. Ստուգող, վերահսկող

II Ըստ ճանաչողական գործունեության բնույթի

1. Ըստ տրված նմուշի . օրինակ՝ գրել տառեր, թվեր, սոսնձել տուփ և այլն,այսինքն՝ աշխատանքներ, որոնք առավելապես հիմնված են ընդօրինակման

վրա:Այսպիսի աշխատանքների կատարման ընթացքում աշակերտների ինքնուրույն գործողությունները սահմանափակվում են պարզ վերարտադրման միջոցով՝ ըստ նմուշի կրկնելով գործողությունները: Այնուամենայնիվ, այսպիսի աշխատանքների դերը բավականին մեծ է:

2. Կառուցողական,որոնք ստեղծագործական մոտեցում են պահանջում:Ընդ որում, կամ ցույց են տալիս առարկան, որի շուրջ պետք է աշխատել, կամ էլ նշում են հարցը, թեման, որը պետք է բացահայտեն: Օրինակ՝ պատրաստել որևէ խաղալիք, հորինել շարադրություն որևէ թեմայով և այլն: Սովորողներին ներկայացվում է նշանակալի ազատություն, ինքնուրույնություն ինչպես բովանդակության որոշման, այնպես էլ աշխատանքի հնարների ընտրության մեջ: Կառուցողական ինքնուրույն աշխատանքները սովորեցնում են վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, ձևավորում են ճանաչողական գործունեության հնարները և մեթոդները, նպաստում են ճանաչողության նկատմամբ ներքին դրդապատճառների զարգացմանը, պայմաններ են ստեղծում դպրոցականների մտավոր ակտիվության զարգացման համար:

Այս տիպի ինքնուրույն աշխատանքները հիմք են ձևավորում աշակերտի ստեղծագործական գործունեության հետագա զարգացման համար;

3. Ստեղծագործական – հետազոտական, որոնք երեխաների ինքնուրույն գործունեության գագաթնակետն են հանդիսանում:

Այդ աշխատանքները ամրապնդում են գիտեիքների ինքնուրույն որոնման հմտությունները: Դրանք ստեղծագործող անձի ձևավորման արդյունավետ միջոցներից են:

Ստեղծագործական բնույթի ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են ընձեռնում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ:

III Ըստ կազմակերպման ձևի

1. Ընդհանուր (ճակատային), երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը

2. Խմբային, երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր

առաջադրանքների վրա,

3. Անհատական, երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:

IV Ըստ ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառության

1. Աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ,բառարաններ,

հանրագիտարաններ և այլն:Տարրական դասարաններում մեծ տեղ է հատկացվում գրքի, գեղարվեստական տեքստի, նկարազարդման շուրջ կատարվող ինքնուրույն աշխատանքին:Գրքի շուրջ ինքնուրույն աշխատելու կարողությունը սովորելուն նպաստող ամենակարևոր կարողություններից է: Առանց այդ կարողության յուրացման հնարավոր չէ իրականացնել գիտելիքների լիարժեք յուրացումը քանի \ որ յուրացման գործընթացի կարևոր կառուցվածքային տարրերը, ինչպիսիք են իմաստավորումը և ամրապնդումն իրականացվում է դասագրքի շուրջ կատարվող աշխատանքի ընթացքում:Գրքի շուրջ աշխատելու անկարողության պատճառով ուսումնական աշխատանքն աշակերտի համար դառնում է տանջալի աշխատանք: Գրքի շուրջ աշխատելու կարողությունների զարգացումն իրականացվում է բոլոր առարկաների դասերի ընթացքում:

2. Շարադրություններ ըստ հենակետային բառերի, նկարների շուրջ և այլն: Դիտումներ և գործնական աշխատանքներ: Դիտումների համար որպես դիտարկվող առարկաներ կարող են լինել շրջապատող առարկաները և երևույթները:Սովորողները հաշվում են , չափում, ստեղծում:Նրանք դիտարկում են առարկաները և երևույթները անմիջականորեն բնության մեջ, անցկացնում են փորձեր' կատարելով գործնական աշխատանքներ:

Դիտարկումների, փորձերի, գործնական և լաբորատոր աշխատանքների հետ կապված ինքնուրույն աշխատանքները ունեն շատ մեծ նշականություն, քանի որ նպաստում են աշակերտների դիտողականության, հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

4.Աշխատանք բաշխիչ նյութերի կիրառման

5.Գրաֆիկական աշխատանքներ

6.Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ: Սովորողները պատրաստում են ինքնաշեն գրքեր ,ես և շրջակա առարկայի! ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:

7V Ըստ կատարման տեղի

1. Դասարանում,
2. Արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ
3. Տանը:

Իսկ ի՞նչ ծավալով և ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար: Այսպես.

1. Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմից ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան րոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթաքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:
2. Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքերի բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել:
3. Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:
4. Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտեիլքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ' արագ աշխատող աշակերտների համար:

5. Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին: Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ:Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ' հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:

Սակայն պետք է նշել ,որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրելիեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները:Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է է դնում.Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

6. Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները

ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:

7. Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում:Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

8. Ցանկալի, որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

9. Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում» , պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

10. Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում

պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյուանվետության բարձրացմանը:

11. Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:

Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ:

Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով:

Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար:Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

2. Տեխնոլոգիայի դասերին կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքների առաջադրանքների մշակում

Տեխնոլոգիայի դասավանդման ընթացքում աշակերտների ինքնուրույն աշխատանքը շատ յուրահատուկ է: Հենց այստեղ է, որ «ծնվում է» այն նոր առարկան, որը պետք է համապատասխանի նախկինում նշված չափանիշներին: Դրա պատրաստման ընթացքում ամրագրվում են դպրոցականների պոլիտեխնիկական գիտելիքները, մշակվում են նրանց կազմված ծրագիրն իրագործելու, ժամանակը և նյութերը խնայելու, աշխատավայրում մաքրության պահպանման ունակությունները, բարելավվում են ուսանողական ճանաչողական գործընթացները՝ ուշադրություն, հիշողություն մտածողություն, խոսք, երևակայություն; օպտիմիզացվում են ուսուցչի և դասընկերների հետ հարաբերությունները:

Դիտարկենք դրանց մոտավոր իրականացման ուղիները: Հայտնի է, որ ցանկացած դաս սկսվում է դրա կազմակերպոումից: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ուսուցիչները այդ խնդիրը լուծում են տարբեր ձևերով: Ուշադրություն դարձնենք դասի առաջին փուլի առանձնահատկություններին, յուրաքանչյուր աշակերտի աշխատավայրի նյութական ապահովման ռացիոնալ տարբերակին:

Դրա համար անհրաժեշտ է:

1. Բոլոր նյութերը և գործիքները ձեռք բերել նախապես ամբողջ դասարանի համար:
2. Նյութը, որն անհրաժեշտ է որոշակի նմուշի պատրաստման համար, դասաժամի նախօրեին նախապատրաստել յուրաքանչյուր աշակերտի համար՝ հաշվի առնելով նրանց աշխատանքային ունակությունների ձևավորումը և բաժանել դասը սկսելուց անմիջապես առաջ:
3. Դասի պարզությունը պետք է համապատասխանի ներկայացվող պահանջներին:
4. Հրահանգ-տեխնոլոգիական քարտ, որը բացահայտում է տեխնոլոգիական գործընթացի ամբողջ հաջորդականությունը, ցուցադրական է և պետք է տեսանելի լինի ամբողջ դասարանի աշակերտներին: Այն կարող է հավաքվել մեկ կտավով կամ բաղկացած լինել առանձին «կրկնօրինկաներից»:

Հմտորեն կազմակերպված նյութական բազան որոշակի նախադրյալներ է ստեղծում ուսուցչի և աշակերտների ստեղծագործական աշխատանքի համար: Ուսուցչի կողմից գեղագիտական և գրագետ կատարված նմուշի առաջնային ցուցադրումը կուժեղացնի երեխաների կողմից առաջադրանքի կատարման մոտիվացիան:

Ծեփակերտման պարապմունքի կառուցվածքը

Ծեփակերտումը ևս շատ կարևոր տեղ է զբաղեցնում երեխաների մտավոր և պատկերավոր զարգացման գործընթացի մեջ: Ծեփակերտման պարապմունքի ժամանակ երեխաները ծանոթանում են պլաստիլինի և նրա

հատկությունների հետ: Նրանք հասկացել են, որ այն փափուկ է և որ հնարավոր է այն բաժանել մեծ և փոքր կտորները, դրանք ծեփելով ստանալ տարբեր առարկաներ կամ պատկերավոր իրեր: Սովորաբար, երեխաները սովոր են պլաստիլինի հետ աշխատելիս այն տափակեցնել և հարթեցնելով խաղալ: Ծեփակերտման պարապմունքի ժամանակ երեխաները սովորում են պլաստիրինից պատրաստել գնդիկներ, ձողիկներ, պարզ ձևի մրգեր, մարդ, ծառ և տարբեր առարկաներ՝ աստիճանաբար էլ ավելի կատարելագործելով իրենց կարողությունները: Ունենալով դիտման և շոշափման բազմաթիվ կետեր, երեխան հնարավորություն ունի ծեփակերտելու առարկայական ձևերը: Ծեփակերտումը նպաստում է երեխաների տարածական մտածողության զարգացմանը, նրանց մեջ ձևավորվում է ձևի գեղարվետական ընդհանրացման կարողություններ:

- Սովորեցնել տալ կերպարի արտահայտչականությունը, առարկաների բնորոշ նշանները, պահպանել մասերի հարաբերական մեծությունը, ամրացնել ծեփված պատկերի մասերը, սեղմելով միմյանց հետ, ամրացման տեղերը հարթեցնելով (կենդանիներ, թռչուններ):
- Ձողիկի օգնությամբ տալ կերպարների բնորոշ գծերը:
- Մեկ ամբողջական կտորից մասերով ծեփակերտել (իրենց ցանկությամբ) տարբեր առարկաներ, կենդանիներ:
- Ծեփակերտման ժամանակ օգտագործել լրացուցիչ նյութեր՝ մետաղալար, չորացրած տերևներ և այլն:
- Ծեփակերտել պլաստիլինով, կավով բնօրինակից դիտված մրգեր, հատապտուղ, բանջարեղեն, ծաղիկ, խաղալիքներ, տարբեր ընտանի կենդանիներ և այլն:
- Ծեփակերտելիեքիաթների թեմաներով՝ երեխաների ցանկությամբ:

Ապլիկացիայի պարապմունքի կառուցվածքը

Ի՞նչ է իրենից ներկայացնում *«ապլիկացիա»* հասկացությունը: Այն ստեղծագործելու ևս մի տեսակ է, որը բավականին օգտակար է վաղ տարիքի երեխաների համար: Ինչպես գիտեք,

փոքրիկները պաշտում են աշխատել թղթի հետ, մասնավորապես՝ կտրատել և սոսնձել դրանք: Ապլիկացիայի պարապմունքները բավականաչափ հետաքրքիր են: Առաջին հերթին ապլիկացիան կարևոր դեր է խաղում երեխայի զարգացվածության վրա: Փոքրիկը ծանոթանում է գույներին, ֆիգուրներին, ինչը նպաստում է նրա մոտ կոկիկության և ուշադրության մակարդակի բարձրացմանը: Այս պարապմունքի շնորհիվ երեխան բացահայտում է աշխարհը, զարգացնում անձնական ստեղծագործական հմտությունները և մատների մոտորիկան:

Ապլիկացիոն պարապմունքները նպաստում են երեխայի հաղորդակցության հմտությունների զարգացմանը, որովհետև վերջինս անմիջական շփման մեջ է մտնում ծնողների կամ հասակակիցների հետ, ովքեր նույնպես մասնակցություն են ունենում ապլիկացիայի գործընթացին: Ապլիկացիան օգնում է երեխային զարգացնել անձնական մտածողությունն ու երևակայությունը: Այս պարապմունքը հնարավորություն է տալիս երեխային ինքնուրույն հորինել հեքիաթային ծառ կամ յուրահատուկ ավտոմեքենա, ստեղծել անսովոր տնակ և մոգական ծաղիկ:

Ապլիկացիայի պարապմունքին հարկավոր է պատրաստված մոտեցում դրսևորել: Հարկ է առաջին հերթին սկսել ճիշտ նախապատրաստությունից: Երեխայի համար հարկավոր է գնել հատուկ մանկական մկրատ՝ բութ ծայրով, որպեսզի ոչ մի վնաս չտա իրեն: Անհրաժեշտ է նաև ունենալ մատիտաձև սոսինձ, որով շատ հեշտ է աշխատել: Անհրաժեշտ են նաև վառ գույնի թղթեր: Սկզբնական շրջանում հարկավոր է ընտրել թեմաներ: Օրինակ, դուք պետք է զարդարեք ծառը տերևներով կամ ստեղծեք կախարդական անտառ: Դասի գաղափարը կարող է լինել շատ տարբեր և բազմազան: Ամենա կարևորը, ձեր յուրաքանչյուր գործողության ընթացքում մեկնաբանեք այն, անվանեք գույներն ու ֆորմաները, ինչը հնարավորություն կընձեռի երեխային մի քանի օրվա ընթացքում յուրացնել դրանց անվանումները և ձևերը: Կսովորի տարբերել շրջանը քառակուսուց և եռանկյունուց[6]:

Ապլիկացիայի պարապմունքի կառուցվածքը՝

[6] **Տե՛ս** «Իմ փոքրիկ», «Ապլիկացիա – ինչո՞վ է այն օգտակար փոքրիկի համար» – http://impoqrik.am/3-6տարեկան/զարգացում/1819-Ապլիկացիա.html

- Սովորեցնել կատարել և փակցնել կլոր ու օվալաձև առարկաների պատկերներ՝ սունկ, աշնանային տերևներ, հավի ճտեր և այլն:
- Կազմել պատկերներ առանձին մասերից՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշը, ծաղիկներ, տերևներ, աշնան գորգ, ունենալ գունավոր թղթեր և բութ ծայրերով մկրատներ:
- Սովորեցնել թուղթը ծալելու միջոցով պատրաստել նավակ, ինքնաթիռ, զամբյուղ:
- Սովորեցնել պատրաստված խաղալիքները նախշազարդել իրենց ցանկությամբ:
- Սեղանային թատրոնների համար ստվարաթղթից կտրել տարբեր ստվերապատկերներ և գունազարդել:
- Ամրապնդել թղթից տարբեր ձևեր կտրելու ունակությունը:
- Սովորեցնել ճիշտ օգտագործել ուրվագծային կտրման ձևերը՝ կերպարը արտահայտիչ դարձնելու համար:
- Սովորեցնել կատարել կտրելու և փակցնելու միջոցով կոմպոզիցիա, ինչպես անհատական, այնպես էլ ոչ մեծ խմբերով՝ ծաղկած այգի, գարնանային գորգ, բացիկներ, հուշանվերներ, գնացք և այլն:
- Աշխատանքները կատարելիս օգտագործել լրացուցիչ նյութեր՝ թել, կտոր, ծաղկաթերթիկներ և այլն:
- Թղթի ծալման և կտրման եղանակով պատրաստել տարբեր ինքնաշեն խաղալիքներ՝ լոտոներ, դոմինո:
- Տարբեր երկրաչափական ձևերից պատրաստել գլուխկոտրուկներ՝ եռանկյունի, քառակուսի, ուղղանկյունի:

Եզրակացություններ

Այսպիսով, մեր աշխատանքի ընթացքում հասել ենք հետևյալ արդյունքների՝

Դիտարկվել են կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ինքնուրույն գործունեության զարգացման համար տեխնոլոգիայի դասերի կազմակերպման մեթոդիկայի առանձնահատկությունները:

Կարելի է առանձնացնել կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի զարգացման հետևյալ մանկավարժական պայմանները՝

- երեխայի մտավոր զարգացումը, (երեխան գիտի տարբեր տեխնիկաների, նյութերի մասին, թե ինչպես պետք է կիրառել նախկինում ստացված գիտելիքները, ինքնուրույն կողմնորոշվել, մշակել աշխատանքային ալգորիթմ),

- երեխայի կողմից իր հնարավորությունների առավելագույն օգտագործումը այս կամ այն խնդիրների ինքնուրույն լուծման դեպքում,

- սովորողի մոտ ազատության առկայությունը գործունեության ուղղությունները, տևողությունը և գործերը որոշելիս, ինչպես նաև մեկ գործով զբաղվելու ժամանակը որոշելիս,

- խրախուսելով երեխայի ստեղծագործական գործունեության ձգտումները, ինչպես նաև ստեղծել բարենպաստ և հարմարավետ հոգեբանական միջավայր:

Ինքնուրույն գործունեության կազմակերպում ձևավորվում է զգացմունքային-արժեհամակարգային վերաբերմունք բարեխիղճ ստեղծագործական աշխատանքի նկատմամբ՝ որպես մարդու գլխավոր արժանիքներից մեկը, իրերի աշխարհի ներդաշնակ կապի գիտակցումը բնության աշխարհի հետ և այդ ներդաշնակության պահպանման համար մարդու պատասխանատվության գիտակցումը, նյութական աշխարհի առարկաներում արտացոլված մշակութային ավանդույթների արժեքի, դրանց ընդհանրության և բազմազանության ըմբռնումը, դրանց ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանյան Շ., «Ձեռարվեստ» դասախոսություն, Գյումրի, 2015
2. Գրիգորյան Ն., Դպրոցականների ստեղծագործական ակտիվության զարգացման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում, Մանկավարժական միտք, 1-2, 2011թ, էջ 53-57
3. Սահակյան Լ. Նավասարդյան Հ., Սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորման դիդակտիկական և հոգեբանական տեսանկյունները Մանկավարժական միտք, 1-2, 2011թ, էջ 7-17
4. «Իմ փոքրիկ», «Ապլիկացիա – ինչո՞վ է այն օգտակար փոքրիկի համար» – http://impoqrik.am/3-6տարեկան/զարգացում/1819-Ապլիկացիա.html
5. Выготский Л. С., Воображение и творчество в детском возрасте, СПб., “Союз”, 1997
6. Крутецкий В. А., Психология обучения и воспитания школьников: кн.для учителей и классных руководителей, М., “Просвещение”, 1976.
7. Скалкова Я., От теории и практики обучения в средней общеобразавательной школе, М., “Педагогика”, 1983
8. Философский словарь / под ред. Н. Т. Фролова, 4–е изд., М., “Политиздат”, 1980